բռնած կարելի է օրորոցը բարձրացնել։ Արկղի երկար կողերից մեկի տակ, աղեղից աղեղ, ամրացրած է կապանաճրպատը։

Արկղի մեջ տակը դրվում է խոտե ներքնակ՝ պէփ. նրա վրա բրդե դոշակ, սրա վրա էլ փռվում է մի կտոր։ Երեքի մեջն էլ թողած ծակով անց է կացրած լոլակը—փայտե խողովակը, որի գլուխը վերջանում է երեխայի սեռանդամն ամփոփող՝ տղայի և աղջկա համար տարբեր ձևի նեղ թասիկ։ Երեխայի գլխատակ դրվում է պէրց՝ բարձ, իսկ արկղի ճրպատին[71] ամրացվում են կտորից կարած լայն ժապավեններ՝ երկու կապանճէր. մեկը՝ երեխայի ոտները, մյուսը՝ ձեռները կապելու համար, իրենց ֆուղէրավ՝ հաստ ու կլոր թելերով։

Քառասունքի ընթացքում ծննդկանին այցելողը տուն մտնելիս պիտի ձեռքը կոխեր աղի կճճի մեջ, որ նրա հետ չար ոգիներն էլ չմոտենային մանկանը։ Քաշկէրը վախենում են աղից։ Բացի դրանից, աղը համարվում էր մաքրման միջոց։ Ապա աղը պիտի մաքրեր մտնողին այն ամեն ինչից, այն բացասական ազդեցությունից, որը կարող էր անցնել նրանից մորը կամ մանկիկին և վնասել նրանց։ Այս մտածողությունից առաջ է եկել և այն սովորությունը, որ տատմերը երեխային ընդունելուց հետո նրան լողացնելով անմիջապես աղ էր ցանում նրա մարմնին, մի սովորություն, որ հարևան ազգությունների մեջ հայերին առանձնապես տարբերում է. այդ պատճառով հայերը նրանց կողմից կոչվում են «աղած»։ Այս սովորությունը տարածված էր եղել հնում նաև հրեաների մեջ[72]։

Հետը քաշկէր բերելու վտանգով պետք է բացատրել և այն, որ քառասունքի մեջ եղողները, լինեն դրանք նորապսակներ թե ուրիշ ծննդկաններ, չպիտի այցելություն գան տվյալ ծննդկանին, քանի որ նրանք պղծված են չար ոգիների ազդեցությամբ։ Թվում է թե նույն հասկացողությունից դրդված՝ երեխային պիտի դուրս տանեին, երբ հայրն առաջին անգամ մտնում էր ծննդկանի սենյակը։ Այս դեպքում հայրը կարծես նկատվում էր մասնակից այն մեղքին, որի հետևանքով էր աշխարհ եկել մանուկը։ Դուրս պիտի տանեին երեխային և այն ժամանակ[73], երբ ներս էին բերում միս։ Միսը շաղկապված է կենդանուն մահացնելու հետ, կարող է հետո մահի վտանգ ներս բերել։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր դուրս տանել երեխային նաև այն ժամանակ, երբ տան մոտից անց էին կացնում ննջեցյալին։ Երեխային իսկույն առնում էին ձեռքերի վրա, այսպիսով կարծես հեռացնելով գետնի երեսից, որտեղ այդ միջոցին աշխուժանում էին չարքերը։

Երեխայի հետ տանից դուրս գնալիս՝ որ աչք չտան, նրա ծոցի մեջ դնում էին հացի մեջ փաթաթած ածուխ կամ հավի թևի ծակոտկեն ոսկորը՝ ճռոնը[74]։ Երբ երեխան վախեցած էր լինում, տալիս էին, որ կուլ տա հացի ածուխ դարձած այրված սև փշրանք կամ դարադամի պատին մնացած մոր՝ մուր։

Ծննդկանը չպիտի ջուր ածի կեծացրած քարի վրա, թե չէ երեխան կմեռնի—ջրի գոլորշիանալը՝ ջրի «մահը» կարող էր վարակել նաև երեխային։

Երեխային չպիտի լողացնեին չորեքշաբթի օրը, որովհետև այդ օրը քաշկէրը շրջում են և կարող են հանդիպել նրան։ Գիշերը երեխային դուրս տանե-

---

71 Մեղրու բարբառով՝ ճէ՛պուտ։

72 Տե՛ս Էզեկիելի, 16, 4։

73 Երեխային անպատճառ դուրս պիտի տանեին՝ երբ տուն էր մտնում չբեր կինը կամ մեկը, որի երեխաները չէին մնում, մեռնում էին։

74 Ճրոնատ ասում են այն մարդուն, որի թևը վնասված է, ծռված է կամ կարճ։